# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 1

## Աշխատանքային գիրք-տետր

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների

առաջին դասարանի սովորողների համար

Երևան-2023

ՀՏԴ
ԳՄԴ

Տեխնոլոգիա 1. Աշխատանքային գիրք-տետր, Ա. Հ. Սվաջյան, Ն. Ա. Օրդյան, Ս. Ս. Պետրոսյան, Հ. Վ. Օհանյան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն - Եր.: Էդիթ Պրինտ, 2023 - 43 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ:
Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

**Մասնագիտական խմբագիր՝** մ.գ.թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

**Գրախոսներ՝**
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

**Հեղինակներ՝**
Սվաջյան Ա. Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Օրդյան Ն. Ա., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

**Համակարգչային ձևավորում՝** Օրդյան Ն. Ա., Խուդավերդյան Դ. Գ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

**Տպաքանակը՝ 150 օրինակ**

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2023

# ՆԱԽԱԲԱՆ

Տեխնոլոգիայի աշխատանքային գիրք-տետրի նպատակն է աջակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին՝ յուրացնելու առաջին դասարանի առարկայական դասընթացը: Այն մշակված է՝ հիմք ընդունելով «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչը, ծրագիրն ու դասագիրքը: Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք նախատեսում են տարբեր նյութերի հետ աշխատանքներ: Մեծ տեղ է հատկացված սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև՝ գործնական աշխատանքների իրականացման խթանմանը:

Տեխնոլոգիայի աշխատանքային գիրք-տետրը բաղկացած է առաջադրանքներից և հավելվածից: Վերջինս ներառում է մկրատով աշխատելու և ինքնակպչուն պատկերներով առաջադրանքների կատարման համար նախատեսված բաժինը: Յուրաքանչյուր առաջադրանքին կից ներկայացված են պայմանական նշաններ, որոնք կուղղորդեն սովորողին ինքնուրույն ըմբռնել տվյալ պահանջը: Միաժամանակ հարկ է նշել, որ, հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, առաջադրանքների բովանդակությունը պետք է պարզաբանվի մանկավարժի, ուսուցչի օգնականի կամ ծնողի կողմից:

Աշխատանքային գիրք-տետրին կից մշակված ուսուցչի ուղեցույցը կաջակցի մանկավարժին մեթոդական առումով առավել հստակ պատկերացնելու յուրաքանչյուր առաջադրանքի բովանդակությունը, քայլերի կատարման հաջորդականությունը, իր կողմից լրացուցիչ մշակվող նմանատիպ հարմարեցումների սկզբունքները, ինչպես նաև՝ կապը առարկայական ծրագրի, չափորոշչի և գործող դասագրքի հետ:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

 Աշխատանք մատիտներով

 Ուսումնասիրության նյութ

 Աշխատանք սոսնձով

 Աշխատանք հավելվածի կպչուն նյութերով

 Աշխատանք ծեփոնով (պլաստիլինով)

 Աշխատանք սերմերով

 Աշխատանք մկրատով

 Նշված տեղից թուղթը կտրել

– · – · – Նշված տեղից թուղթը ծալել

**Զրույց «Շրջապատող առարկաներն ու իրերը, ի՞նչ նյութերից են դրանք պատրաստված, ովքե՞ր են դրանք պատրաստել» թեմայի շուրջ:**

Եթե դու նայես քո շուրջը, ապա կտեսնես բազմաթիվ առարկաներ: Դրանց մեծ մասը պատրաստվել է մարդու ձեռքերով:

Արամը կահույք է պատրաստում,
նա կահույքագործ է:



Կարոն ավտոմեքենա է վերանորոգում,
նա մեխանիկ է:



Անահիտը հագուստ է կարում,
նա դերձակ է:



Սեդրակը կավից ամաններ է պատրաստում,
նա խեցեգործ է:



Մարինեն ուտելիք է պատրաստում, նա խոհարար է:





Գագիկը տուն է կառուցում, նա շինարար է:





***Առաջադրանք 1.*** Գտի՛ր այն մասնագետին, ով պատրաստել է նկարում պատկերվածը (հավելված 1):













***Առաջադրանք 2.*** Առարկաները փակցրո՛ւ համապատասխան մասերում (հավելված 2):

**Բնական իրեր**



**Մարդու կողմից պատրաստված իրեր**



**Ի՞նչ նյութերով ենք աշխատելու տեխնոլոգիայի դասերին**

***Առաջադրանք 3.*** Ընտրի՛ր համապատասխան նյութերի նկարները և փակցրո՛ւ ճիշտ տեղերում (հավելված 3):

| **Բնական նյութեր** | | |
|---|---|---|
|  |  |  |
|  |  |  |

| Արհեստական նյութեր | | |
|---|---|---|
|  |  |  |
|  |  |  |

***Առաջադրանք 4.*** ա) Ուշադիր նայի՛ր այս առարկաներին և ասա՛, թե ինչո՞վ են նման:

բ) Դրանցից որո՞նք են պատրաստված մարդու կողմից, նշի՛ր: ☑



***Առաջադրանք 5***. Ներկի՛ր տերևները քո նախընտրած գույներով:













***Առաջադրանք 6.*** Հավաքի՛ր գեղեցիկ տերևներ և չորացրո՛ւ հաջորդ դասերի համար:

***Առաջադրանք 7.*** Քո հավաքած չորացրած տերևներից մի քանիսը փակցրո՛ւ այստեղ:

***Առաջադրանք 8.*** Քո հավաքած տերևներով պատրաստի՛ր կոմպոզիցիաներ ըստ պատկերների, մատիտով լրացրո՛ւ դրանք:

ա) Թիթեռ





բ) Բադ





գ) Կրիա





դ) Եղջերու







***Առաջադրանք 9.*** Նկարները փակցրո՛ւ համապատասխան գույների ֆոամիրանի վրա, կտրի՛ր եզրագծով և, օգտվելով նկարից, սոսնձով հավաքի՛ր կոմպոզիցիա (հավելված 4):





***Առաջադրանք 10.*** Նկարների վրա ծեփոնի օգնությամբ ամրացրու՝ սերմերը, այնուհետև ամբողջացրու՝ պատկերները:

ա) «Ոզնի»





բ) «Ձուկ»



***Առաջադրանք 11.*** Ծեփոնով պատրաստիր ծիածան:



***Առաջադրանք 12.*** Ուսումնասիրի՛ր թղթի հատկությունները:

| | | |
|---|---|---|
| ա/ Փորձի՛ր թուղթը պատռելով հավասար մասերի բաժանել:<br> | բ/ Թղթի կտորներից գնդիկներ պատրաստի՛ր:<br> | գ/ Թուղթը ծալի՛ր հավասար մասերի:<br> |
| դ/ Թուղթը ոլորելով պարան պատրաստի՛ր: Ո՞ր թղթից ավելի բարակ պարան կստացվի:<br> | ե/ Ջրի մեջ թրջելով համեմատի՛ր թղթի տարբեր տեսակները: Ո՞րն է ավելի շուտ թրջվում:<br> | զ/ Թղթի կտորներն ընկղմի՛ր տարբեր գույներով ներկված ջրի մեջ: Ի՞նչ տեղի ունեցավ:<br> |

***Առաջադրանք 13.*** Մկրատով առանձնացրո՛ւ տարբեր գույնի քառակուսիները և, օգտվելով օրինակից, նշված տեղերով ծալի՛ր (հավելված 5):













***Առաջադրանք 14.*** Նախորդ առաջադրանքի գունավոր թղթի կտորները ձեռքով պատռի՛ր մանր կտորների, նկարի վրա սոսնձելով գեղեցիկ ձևավորի՛ր այն:





***Առաջադրանք 15.*** Հավաքի՛ր նկարում պատկերված ծաղիկը (հավելված 6):



***Առաջադրանք 16.*** Հավաքի՛ր նկարում պատկերված թրթուրին (հավելված 7):



***Առաջադրանք 17.*** Մրգերն ու բանջարեղենները տեղադրի՛ր նկարի վրա՝ ճիշտ տեղերում (հավելված 8):

**ՄՐԳԵՐ**



**ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐ**



***Առաջադրանք 18.*** Հավաքի՛ր Ձմեռ պապ՝ հետևյալ օրինակով (հավելված 9):








***Առաջադրանք 18.*** Պատրաստի՛ր «Նոր Տարի» կոմպոզիցիան թղթից և բամբակյա սկավառակներից (հավելված 10): Մատիտով կամ ներկերով ամբողջացրո՛ւ նկարը:





***Առաջադրանք 19.*** Հավաքի՛ր մեղու, զատիկ և բերված օրինակով ձևավորի՛ր մարգագետին (հավելված 11): Կարող ես մատիտով լրացնել բնապատկերը (խոտ, ծառ, արև և այլն):

ա) Մեղու



1. 2. 3. 4. 5.



բ) Զատիկ



գ) Մարգագետին



*Մարգագետին*





***Առաջադրանք 20.*** Մկրատով կտրի՛ր շրջանները և դրանցից պատրաստի՛ր հավիկներ, կարմիր և սև մատիտներով ամբողջացրո՛ւ պատկերը (հավելված 12)։ Հավաքիր կոմպոզիցիա և ընկերոջդ հետ հորինի՛ր կարճ պատմություն նրանց մասին։



### *Հավիկներով կոմպոզիցիա*

***Առաջադրանք 21.*** Պատրաստի՛ր տոնական բացիկներ՝ ըստ տրված օրինակի (հավելված 13):



***Առաջադրանք 22.*** Պատրաստի՛ր թելափունջ՝ բերված օրինակով:



***Առաջադրանք 23.*** Համապատասխան պարագաներով սպասքադրի՛ր թեյի սեղանը (հավելված 14):



***Առաջադրանք 24.*** Համապատասխան պարագաներով սպասքադրի՛ր սուրճի սեղանը (հավելված 15):



ՈւՍՈՒՑՉԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ամփոփիչ եզրակացություն)

## *Հավելված 1.*



## *Հավելված 2.*



*Հավելված 3.*




















*Հավելված 4.*



*Հավելված 5.*



Հավելված 6.



Հավելված 7.



*Հավելված 8.*



## Հավելված 9.



## Հավելված 10.



Հավելված 11.



Հավելված 12.



*Հավելված 13.*



*Հավելված 14.*



*Հավելված 15.*

